ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» Մարտի 2020թ. N ՄՈ/36-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիրի N9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի մարտի 19-ի N 028, «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի մարտի 12-ի, «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի փետրվարի 28-ի N Ե/ԱԳ-010-2020, «Մուսալեռի Ֆ.Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի մարտի 23-ի N 34 գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 6 հավելվածի 5-րդ կետում «Մեհրաբյան Քրիստինե » բառերը փոխարինել «Մարգարյան Նելլի» բառերով,
   2) որոշմամբ հաստատված N 48 հավելվածի 7-րդ կետում «Սուքիասյան Նոնա» բառերը փոխարինել «Հայրապետյան Հերմինե» բառերով, 8-րդ կետում «Ամալյան Տաթևիկ» բառերը փոխարինել «Մարգարյան Անուշ» բառերով,

3) որոշմամբ հաստատված N 72 հավելվածի 8-րդ կետում «Չիլինգարյան Հասմիկ» բառերը փոխարինել «Մուրադյան Քնարիկ» բառերով,

4) որոշմամբ հաստատված N 87 հավելվածի 5-րդ կետում «Կարապետյան Իրինա» բառերը փոխարինել «Բաբայան Վերա» բառերով, 6-րդ կետում «Պալոյան Սամվել» բառերը փոխարինել «Հակոբյան Նարինե» բառերով, 7-րդ կետում «Օհանյան Վարսիկ» բառերը փոխարինել «Աղաբեկյան Գայանե» բառերով, 8-րդ կետում «Գևորգյան Ալինա» բառերը փոխարինել «Հարությունյան Մարգարիտ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

3/25/2020

X

VERIFIED OCSP 3/25/2020 16:19:38 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230